ծարանական *) ձեռնարկութեամբ, մեծապէս նը-պաստել են վարդաշէնցիների մտաւոր և բարոյա-կան ու տնտեսական յառաջադիմութեան։ Նմանա-պէս Առաքել Մուրատեան և Նիկողոսեան եղբարք (հայ և ռուս յայտնի հրապարակախօս պ. Գր. Նիկողոսեանի հարազատները) որպէս առաջաւոր և նշանաւոր Հայ գերդաստաններ խթան են եղել Վարդաշէնի յառաջադիմութեան գործին։ Վարդա-շէնում հարիւրաւոր հայախօս և հայ գրաճանաչ հայեր կան այժմս, այն ինչ Նիժ ուտիախօս գիւ-ղաքաղաքը՝ Վարդաշէնի համեմատութեամբ, ա-ւելի ստոր աստիճանի վրայ է կանգնած։ Նիժե-ցիք իրենց թւով և անվեհեր քաջութեամբ ամ-բողջ դաւառի բոլոր գիւղերի մէջ առաջին տեղն են բռնում։ Նիժեցոց բարոյական և տնտեսական վիճակը լաւ է, բայց ուսման, կրթութեան և ա-բուեստագիտութեան մէջ՝ ողբալի դրութեան մէջ էին մինչև 1870-նական թուականների կէսը. ահագին Նիժում և ոչ մի աստղձագործ կամ կօշ-կակար տեղացի արհեստաւոր չէիք գտնի։ 1876 թ. սկսած, իմ յորդորմամբ և համոզեցնելով՝ մի քանի թրքախօս և ուտիախօս գիւղերից բազմա-թիւ պատանիներ ուղարկուեցան Կովկասեան զանազան քաղաքները, որոնցից ոմանք ուսում և ոմանք էլ պէսպէս արհեստներ սովորելուց յետոյ

---

*) Սիլիկեան եղբարք ունին Վարդաշէնում մետաքսի թել պատրաստող շքեղաշարժ մի մեծ գործարան, որ իւր դրամագլխով և արտադրութեամբ մեծ օգուտներ է տալիս հայրենի գիւղաքաղաքի աղքատ բնակիչներին։